

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի հատուկ խնամքի և ուշադրության առարկան է եղել միշտ էլ Ս. Էջմիածնի միաբանությունը։ Վեհափառի ամենամեծ ցանկությունն է Էջմիածնի միաբանության շարքերը խտացնել նոր և զարգացած եկեղեցականներով։ Վեհափառի այդ ակնկալությունն իրագործելու է կոչված Հոգևոր Ճեմարանը՝ իր հասցրած երիտասարդ հոգևորականներով։ Հոգևոր Ճեմարանը մեր օրերում ազգային-եկեղեցական դաստիարակության վառ օջախներից մեկն է։ Հոգևոր Ճեմարանը տվել է արդեն կրթված, ընդունակ, կայուն նկարագրի տեր երիտասարդ սարկավագներ, Վեհափառի մասնավոր ընտրությամբ։

Վերջերս Էջմիածնի միաբանության շարքերում ավելացավ մի նոր սարկավագ՝ Պերճ Պետիկյանը։ Նորընծա սարկավագն ավարտելով Հոգևոր Ճեմարանի դասընթացը, զգացել է կոչում՝ հոգևոր ասպարիզում ծառայելու։ Իր այդ ցանկությունը նա փոխանցած արտահայտեց Վեհափառ Հայրապետի անունով գրած հետևյալ դիմումի մեջ.

«Վեհափառ Տե՛ր.

Ստանալով հոգևոր կրթություն Ճեմարանում և ավարտելով նրա վեցամյա դասընթացը, ու միաժամանակ նվիրված, գիտակից եկեղեցականների կյանքը, գործունեությունն իբր օրինակ ունենալով, ես եկա այն եզրակացության, որ կարող եմ մեր ժողովրդին լավագույնս ծառայել, ընտրելով հոգևոր ասպարեզը։

Խոստանալով, որ Ձեր իմ վրա դրած հույսերը փ դերև չեմ հանի, խնդրում եմ ինձ շնորհել սարկավագության կոչումն։»

Պետիկյանն իր համեստությամբ, աշխատասիրությամբ և եկեղեցասիրությամբ արժանացավ Վեհափառի բարձր հավանությանն ու շնորհին. Էջմիածնի վաթսունվեցում, կիրակի, նոյեմբերի 2-ին, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվեց սարկավագ։